Զ. Տ ԼՐԻ 1702 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 6 ՀՈԲԻ 4382 — Հ. Տ. 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1889 — Ն. Տ. 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1889 — ՀԻՃՐ. 1 ՍԻՖԷՐ 1307 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՕՐԵՒ ԻՆԼԵ ԴԻՊԱԹԱՓԱՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
[illegible]
Գալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌وك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Կ Պոլսոյ համար [illegible] գներ՝ տարեկան 160
» » [illegible] » » 80
» » եռամսեայ » » 40
Գաւառաց Տարեկան 200
» » Վեցամսեայ 100
Օտար երկիրներէ տարեկան [illegible] 56
» » վեցամսեայ » 28
Դեռ պրկուած ստացուած նամակը նամակը [illegible] վրայ և խմբագրութեան պրկուած նամակ կամ գրութիւն ետ չառնուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅԲԱՐՆ Ի ՖՐԱՆՍԱ.

Ամեն տեղեկութիւն կը ցուցնեն թէ ընտրական պայքարն ընդհանրապես Ֆրանսա գովելի բարեկարգութեամբ տեղի ունեցած է, թէեւ Հանրապետութեան դոյութիւնն իսկ ի վտանգի էր, և թէպէտ հանրապետական կառավարութեան հակառակորդք իրենց յաջողութեան վրայ մեծամեծ յոյսեր դրած էին։ Պայքարն ամենէն աւելի սաստիկ էր ի Փարիզ, ուր սակայն ենթադրուած անկարգութիւնք չպատահեցան, և յուսահատներու երկիւղք ի դերեւ ելան։ Իրենց բոլոր ծայրայեղութեան հակառակ, Փարիզցի ընտրողք կարծես հայրենասիրական նկատում մ'ունեցան՝ Արուեստահանդիսի ժամանակ, ի ներկայութեան օտարազգի հիւրերու, խայտառակ բաներ չգործելու, և ընդհակառակն, բարեկարգութեան և օրինապահութեան ցոյց մ'ընելու,—Ֆիրքեր զրպօտարազգի քննադատք սովորաբար կը զանան ֆրանսացի ժողովրդեան։

Այսու ամենայնիւ, յայտարարութիւն փակցնողներու հետաքրքրաշարժ վարմունքը բաւական ծաղու առարկայ եղան ընտրութեան նախընթաց մի քանի աւուրց մէջ։ Ընտրելիք, իրենց քաղաքական դաւանանքը լրագրաց մէջ հրատարակել բաւ չհամարելով, պատերուն վրայ ալ կը փակցնէին։ Արուեստահանդիսի ամենէն հետաքրքրաշարժ առարկայից քով դասուելու արժանի էին Փարիզի պատերն այս վերջին մի քանի աւուրց միջոցին։ Հասարակային թէ անհատական չենքերու պատերուն վրայ անկիւն մը չէր մնացած որ ծածկուած չլիներ գոյնզգոյն և տեսակ տեսակ յայտարարութեամբք։ Զատուոր Հանրապետականք, Արմատականք, Ընկերվարականք, Ազգայնականք, Աբքայականք, Գուլանժէականք, Գոնտարթեանք, ամեն տեսակ ընտրելիք, մեծ և փոքր, քառակուսի, կլոր, եռանկիւն, ամեն ձեւով և ամեն տարազով թուղթեր փակցուցած, իրենց սկզբունքը մինչեւ եօթներորդ երկինք կը բարձրացնէին, և հակառակորդներն և անոնց դաւանանքը գետնէ գետին կը զարնէին։ Բայց պատերը շատով ծածկուեցան և տրամադրելի տեղ չմնաց, — նոյն իսկ Փարիզի պէս քաղաքի մը պատերուն վրայ։ Ասոր հնարքը շատով գտան Բամբիշներն, (ինչպէս կ'անուանին փոզոյներուն մէջ լրագիր ծախող և յայտարարութիւններ փակցնող թափառաշրջիկ մարդիկն, իրենց սովորաբար հագած մաղձէն կերպասին (ՈՀ) անուամբ)։ Կուսակցութեան մը գործակալները կամ Բամբիշներն իրենց ձեռքը դանուած յայտագրերը փակցնելուն պէս, կայծակի արագութեամբ կը հանէին միւս կուսակցութեան Բամբիշներն, որք նոյն պատին վրայ, ճըշդիւ նոյն յայտագրաց վրայ, կը փակցնէին իրենց յայտագրերն, այնպէս որ Թղթի այս մեծ և փոքր կտորներ հազիւ քանի մը վայրկեանի կեանք կ'ունենային, և իրարու վրայ փակցուելով՝ քիչ ժամանակի մէջ սուտար խաւ մը կը կազմէին։ Ընդդիմադիր կուսակցութեանց կողմէ ներքին գործոց կրօնի և գործունեայ նախարար Պ. Բոնսթանի դէմ ուղղեալ բազմաթիւ և բազմատեսակ ամբաստանութեանց մին ալ սա էր թէ շատ մը ճարպիկ Բամբիշներ վարձած էր՝ օ՛չ թէ կառավարական ընտրելեաց յայտագրերը փակցնելու, որուն մարդ բան չէր կրնար ըսել, այլ հակավարչական ընտրելեաց յայտագրերը փակցուելուն պէս բզկտելու կարի բացասական պաշտօնով։ Յայտարարութիւն փակցնողներն ու բզկտողներն այսպէս իրարու կը յաջորդէին ծիծաղաշարժ թափորով մը, իւրաքանչիւրին ձեռքը մէկ մէկ սանդուխ, տպալ թուղթի ծրար մը, օսլայի (ՀՕԼԼ) ման մը, եւ քերիչ գործի մը։ Ոստիկանութեան միակ պաշտօնն էր նայիլ որ այս մարդիկ իրարու հետ կռուի չբռնուին։ Հասարակաց պատերն հանրային ստացուածք գոլով, անանց վրայ ամեն ոք բան կրնար փակցնել։ Արձաններն ալ յայտարարութեամբք ծածկուած էին։ Բամբիշները Փարիզի հարիւրաւոր արձաններուն մէջէն կը յարգէին միայն երկուքը, Սթրազուրկի արձանն, որ Ալզաս-Լոռէնի կորստեան վշտին հետ ազգադոյզ յաղթութեան ու վրէժխնդրութեան ցնորմիկ յոյս կը ներկայացնէ, և Ժանն մ'Արքի արձանն, որ կը խօսի ամենէն անհաւատ Ֆրանսացւոյ մ'անդամ օրուն, իբրեւ ամենամարդասէր արտայայտութիւնն ֆրանսական ազգին դիւցազնական ոգւոյն։ Բայց այդ երկու արձաններուն խնայող Բամբիշները չէին խնայեր մանաւորապէս բնակարաններն, որք աւելորդ է յիշեցնել թէ Արուեստահանդիսի առթիւ նոր ծեփուած ու ներկուած էին ամենքն ալ։ Ցուներու գռնապանները միայն, շարունակ գրանց առջեւ նստած, կը պահպանէին իրենց խնամոց յանձնեալ պատերը։ Բայց վերջապէս մարդ են։ հանգստանալ պէտք կ'ունենան։ և քնանալու կամ ճաշելու համար նոցա քաշուելնուն պէս, անխոնջ Բամբիշ կը վազէր կը հանէր, և ամենէն ճարպիկ գողի պէս սանդուխը դնելով, ման մինչեւ երրորդ յարկին ճակտին վրայ իւր ճակատագրական յայտագիրը կը փակցնէր։ Առտուն դուռը բանալով, ապշած շուարած գռնապանը զայրոյթով կը տեսնէր ման երեսը գոյնզգոյն ներկուած այս անվարձ ներկարարներու կողմէ, որոց համար ոսկոյն իւզաներկի տեղը կը բռնէր, և հասարակ ծեփիչ մը վրձինի պաշտօն կը կատարէր։ Թաղին բոլոր գռնապաններն յայնժամ ժողվուելով, «տարաբարութեանց փոխանակութիւն» մը կ'ընէին այս տարօրինակ տեսարանին վրայ, անիծելով Բամբիշներն ալ, քաղաքականութիւնն ալ, որք հանդարտ չեն թողուր մարդուս սիրան, — օ՛չ ալ տան երեսը։ Բամբիշներն իրենց քթին տակէն կը խնդային գռնապաններուն վիճակին վրայ, բայց իրարու հետ բարեկամաբար կը վարուէին։ զիրենք վարձող քաղաքական գործիչներու կագերն ու կռիւները չէին իւրացներ։

Ասով հանդերձ, ուրիշ ուրիշ յաւելի դէպքեր ալ պակաս չեղան։ Օրինակի համար յիշենք հետեւեալը։

Փարիզի ժամ. շրջանակին մէջ, Շաբաթուն 23 ամեայ արհեստաւորն, որ ընտրական պայքարի միջոցին յայտագիր փակցնելն աւելի շահաւոր կը գտնէր, երկայն պանդուխի մը վրայ եղած, Սէն Մոռ փողոցի տան մը պատին վրայ յայտագիր կը փակցնէր յանուն Պ. Ալմանի (Allemane), գործաւորական ընտրելեայն։ Ժիւլ Նըվէօ անուն 19 ամեայ ուրիշ արհեստաւոր մը՝ արքեալ անտի անցնելով «Ի՞նչ կ'ընէք հոգ, չեմ ուզեր որ Ալմանի մը (Allemand) յայտարարութիւնը փակցնէ» պոռաց հայհոյելով։ Անցողներ ուզեցին վռնտել զնոքսօ։ «Մի՛ դպչիք», պոռաց վերէն Շաբաթ, «չէ՞ք տեսներ, գինով է»։ Բանի մը վայրկեան եռաբը վար իջնելով, Շաբաթ ըսաւ արքեալ երիտասարդին. «Գնա սրիկ, եթէ չես ուզեր որ ականջդ բռնեմ քաշեմ»։ Նըվէօ յարձակեցաւ Շաբաթի վրայ։ սաստիկ կռիւ, երկուքն ալ մէկէն կը տապալին։ եւ Նըվէօ որ իւր հակառակորդին տակն է, սուր դանակ մը քաշելով, կոխոտէն և ուզն ծանրապէս կը վիրաւորէ զնա։

Շաբաթ իւր տունը կը փոխադրուի մահաբեր վիճակի մէջ։ Զարգացրեալ կը ձեր բանալուն։

Բարեբախտաբար, Փարիզի լրագրերք միահամուռ կ'հաստատեն իրենց այս կիրակի երեկոյեան թերթերով թէ ի պատիւ Փարիզցի հասարակութեան՝ այսպիսի ցաւալի դէպքեր յոյժ սակաւաթիւ էին, և ընտրական պայքարը բարեկարգ պայմանաց մէջ կը կատարուէր։ Ամորձելի էր տեսնել բիւրաւոր գործաւորներն որք իրենց կիրակնօրեայ զգեստն հագած, և քուէթողներն իրենց ձեռքը բռնած, կը ներկայանային մէն մի չորջանակի քուէարկութեան դիւանն, և իւրաքանչիւրը քառորդ ժամ կամ մինչեւ իսկ կէս ժամ իւր կարգին ըսպասելով դրան առջեւ, իւր քուէն կը նետէր տուփին մէջ, և կը մեկնէր, գրեթէ ամենց բերանը բանալու։ Ամեն կուսակցութեանց ներկայացուցիչք՝ այս պաշտօնարաններու դրանց առջեւ կեցած՝ իրենց տպեալ քուէթուղթերը կը բաշխէին։ Գործաւորք իրենց ներկայացուած ամեն քուէթուղթերը կ'առնէին, կը կարդային, և եթէ համամիտ չէին, փողոցը նետելով կը շարունակէին իրենց գործը։ զի ճշմարտապէս իրբեւ գործ մը կը նայուէին իրենց ընտրողութեան իրաւանց կիրառութիւնն։ Ամենէն ազգեան անդամ կ'ըմբռնէր ընդդիմամբ թէ նոյն օր իւր թղթի կտորն երկրին ճակատագիրը պիտի որոշէր։ Եւ եթէ այսչափ գիտակցաբար կը գործէին գործաւորներն, աւելորդ է յարել թէ արհեստաւորք, խանութպանք, վաճառականք և աւելի ուշիմ դասք ժողովրդեան աւելի եւս փութաջանութեամբ ի գործ կը դնէին իրենց ընտրողութեան իրաւունքը։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

ՓԷՐԷՊՊՈՒԷ, 24 սեպտ.—Արտաքին գործոց նախարար Պ. Կիրս ասա վերադարձաւ ի Ֆինլանտիա ուղեւորութենէն, և կ'ըսուի թէ Պերլին պիտի երթայ՝ երկուց Կայսերաց տեսակցութեան առթիւ։

—Պեռլին, 24.—Նաթալի թագուհին գրով ծանոյց առ Միլան թագաւոր թէ ինք բայարձակ որոշած է Պելկրատ մնալել տեղւոյն 29ին (առաջիկայ կիրակի)։ Պաշտօնական ակմտոց մէջ ապահովապէս կը ծանուցուի թէ Միլան թագաւոր եւս պիտի վերադառնայ, և կը վախցուի թէ պիտի ուզէ օգուտ քաղել Սահմանադրութեան 72ԴՐ յօդուածէն, որ իրեն իրաւունք կուտայ ստանձնելու Ալեքսանդր թագաւորին խնամակալութիւնը։ Բայց գլխաւոր խնամակալ Ռիսթիչ կը յուսայ խառնաշփոթութեան առաջքն առնուլ։

—Վիեննա, 24.—Նայէ Թրայէ Փրէսէ այսօր երիցն յօդուած մը կը հրատարակէ Նաթալի թագուհւոյն վրայ, եւ կ'ըսէ թէ կեղծ դիւրագրածութիւն է ՀՏԿԷՆ Նաթալի նկատել սիրալիր մայր մը որ կը փութայ իւր որդին ողջագուրել։ Նա Պելկրատ կ'երթայ որոշ գաղտարով մը, և անշուշտ իրրեւ թշնամի Աւստրիոյ։

—Մոսքվէի Վէդոմոսթի լրագրին Սոֆիայի թղթակիցը կը գրէ թէ սա գէպք գաղտարար կուսակցութեան մէջ ընդդիմադիր կուսակցութեան կրած վճռակին վրայ։—Այս կուսակցութեան թերթը, Նարոդնի Փրաֆ, հարկադրեցաւ իւր հրատարակութիւնը դադրեցնել, որովհետեւ իւր Ֆինանսիստ խմբագիրն եւս բանտարկուած է, և պուլկար հրապարակագիրներէն օ՛չ ոք յանձն կ'առնու պատասխանատու զոնը լինել։ Ընդդիմադիր թերթին այս ինն գլխաւոր խմբագիրք ամենը մէկէն չորս տարուոյ բանտարկութեան դատապարտուած են, որ կ'ընեն մարդ դլուխ միջին հաշուով հինգ ու կէս տարուոյ բանտարկութիւն՝ սակ «լրագրական յանցանքի» համար։

—Վերջին ժամանակներս Անգլիա մեծաւ հոդածութեամբ աւելցուց եւ զօրացուց Մալթա կղզւոյն արդէն առաւել ամրութիւններն, և մանրեղ ժողովրդեան գործաւոր և գիւղացի դասերէն կազմեց կիրթ և քաջավարժ զունդեր հետեւակաց և հրետանաւորաց։

—Ժորնալ դը Սէն Փէթերսպուրկ կառավարական թերթն իւր սեպտ. 22 թերթով կը հաստատէ թէ 1888 տարւոյն մէջ Ռուսիոյ ելմտացոյցը կը ցուցնէ երեսուն միլիոն ռուբլի հաստիքի առաւելութիւն ծախուց վրայ։

—Զանզիպարի Սուլթանն կողմէ եւս գեսպանութիւն մը Փարիզ հասաւ՝ Արուեստահանդիսին առթիւ։

—Պուլկար կառավարութիւնը պիտի առաջարկէ Սոպրանյէին որ ցկենսաթոշակ մը կապուի հանդուցեալ ազգային գործիչ Զախարիա Սթոյանովի այրւոյն։ Ֆերտինանտ Իշխան ալ հրամայեց որ հանդուցելոյն երկու զաւակներն իւր ծախիւք դաստիարակուին։ Անհիմն է ուրեմն Սթոյանովի թշնամեաց յայտարարութիւնը թէ ահագին հարստութիւն կը թողու։

—Պ. Ռիսթիչ՝ Սերպիոյ դիւանագիտ խնամակալն թերթն՝ Օգէ՝ Սթոյանովի վրայ յօդուած մը գրելով, կ'ըսէ թէ օ՛չ Սերպիա օ՛չ Ռումանիա այլ ևս չպիտի գործեն նոյն սխալը զոր ժամանակէ մ'ի վեր Պուլկարիա կը գործէ՝ հակառուս ուղղութիւն մը տալով իւր ներքին և արտաքին քաղաքականութեան։

—Զարը «Կայսերական Բարձրագոյն Տուն» նախանձելի տիտղոս տուաւ Զեռնակորայի իշխանին Միլիձա դստեր, որ Լէյշտենպուրկի դքսուհի է այժմ։

—Զարն ամեն ծախք իւր անձնական դանձէն վճարելով, արմտիօք լեցուն շրջենաւ մը ղրկեց Անթիվարի, յօդնութիւն չեռնակորացի սովելոց։

—Փեթերսպուրկի պաւական Բարեսիրական ընկերութիւնն իւր 200 օսմ. ոսկւոյ պարգեւ խոստացաւ Մակեդոնիոյ ցնորզրութեան և յարակից խնդրոց վրայ լաւագոյն երկն յօրինող հեղինակին։

—Անգլիոյ և Իտալիոյ միջեւ պայմանագրութիւն մը ստորագրեցաւ դերեվճառութեան խափանման համար։ Գերեվարաց տարեւան այս պայմանագրութեամբ կը նկատուի ծախսհինութեան հաւասար ոճիր, և գերի պարտանակողնաւերն անմիջապէս դրաւուելով, դատի պիտի ենթարկուին յատկապէս կազմեալ դատարանաց առջեւ։ Անգլիա որոշեց Սիերա-Լէոնէի, Սուաքինի, Ասէնի և Զանզիպարի նաւահանգիստներն, ուր պիտի դիմեն անգլիական մարտանաւերն իրենց բռնած գերեվարաց նաւերը դատի ենթարկելու համար։ Իտալիա դեռ չէ որոշած իւր նաւահանգիստներն։ Անգլիական և իտալական կառավարութիւնք իրարու փոխադարձ իրաւունք կուտան այցելու անգլիական և իտալական գրօշ կրող նաւերն, որոց համար կանգած լինի թէ գերի կը պարունակեն։

—Մեծաւ յաջողութեամբ գործի կը ձեռնարկէ Պարսկաստանի Կայսերական Դրամատունն, որ անգլիական հատատութիւն մ'է, և սեղմանաւորական գործողութիւններէ զատ նաեւ հանքեր շահագործելու իրաւունք ունի, ինչպէս գրած ենք արդէն։ Առ այժմ դրամագլուխը մէկ միլիոն ոսկի է, բայց չորս միլիոնի կրնայ բարձրացուիլ։

—Աւստրիոյ Կայսրն Հունգարիայէն մեկնեցաւ, մեծաւ զօրաց ընտիր առաջնորդներու հետ՝ իւր ջերմ գոհունակութիւնն յայտնելով։ Մաճառք եւս գոհ ցնծացին իրենց թագաւորին ցոյց տուած հոդածութենէն։ Բայց գժբախտ դէպք մը տեղի ունեցաւ, որ տակաւին մութի մէջ է։ Մոնոռ մաճառական փոքր քաղաքին մօտ գնդապետի մը տան վերեւ պարզուած աւստրեան դրօշը բզկի բզկի եղած և ցեխի մէջ թաթախուած գտնուեցաւ։ Այս չարութեան հեղինակն ու շարժառիթն յայտնի չեն տակաւին։ Կայսրն խմենալուն պէս, այն քաղաքը գնաց, ուր տեղական իշխանութիւնք ընդ առաջ ելնելով, իրենց անձնուիրութեան եւ հաւատարմութեան ջերմագին հաւատիքն ընծայեցին։ Կայսրը պատասխանեց. «Կը յուսամ որ ձեր հաւա«տարմութիւնն օ՛չ միայն խօսքով այլ «և գործքով ցոյց պիտի տաք, և հոս «տեղի ունեցած չարագործութեան «նման պիտի եղելութիւնք չպիտի «կրկնուին, և հեղինակները գտնուե«լով պիտի պատժուին ըստ օրինաց և «իրաւանց»։ Այս խիստ բայց արդար խօսքերն արտասանելով, Կայսրն հեռացաւ անմիջապէս։ Աւելորդ է ներկայից որոտալութեան վրայ խօսիլ։

—Զարն հրաման ղրկեց իւր Պելկրատի դեսպան Պ. Փերբանիի՝ պաշտօնապէս ներկայ դանուիլ Նաթալի թագուհւոյն ի Պելկրատ ընդունելութեան։

—Լոնտոնի երեւելի յոյն սեղանաւոր Պ. Ի. Ա. Համպրօ Անգլիոյ Դրամատան Ցնծալին Խորհրդոյն անդամ ընտրեցաւ։

—Անցեալ օր ծանուցեր էինք թէ առաջիկայ պատերազմին ի Նախատեսութիւն՝ իտալական զօրքը չորս բանակներու բաժնուած է։ կը ծանուցուի թէ հինգերորդ բանակ մ'եւս պիտի կազմուի յատկապէս աւստրեան բանակին հետ դաշնակցաբար գործելու համար, և ասով կը բացատրուի եղեր Փիսանէ իտալացի զօրավարին Աւստրիա և ի Թուրքիա ուղեւորութիւնը։

—Անգլիական Ռոյնոէր արքունի շրջենաւը Զանզիպարի Բէմպա կղզւոյն մօտ արաբական նաւ մը բռնեց, յորում 131 գերիներ կային։ Ասոնք անմիջապէս ազատ հռչակեցան։

—Վիեննայի լրագրաց մէջ հրատարակեալ հեռագիրը Ֆրանսական ընտրութեանց վրայ նորագոյն տեղեկութիւնները կը հաղորդեն։

Հանրապետականք 350 երես ոչխան անպատճառ պիտի ունենան, և թերեւս աւելի ալ։ որովհետեւ արդէն առաջին քուէարկութեամբ ընտրեալ 224 Հանրապետականց վրայ պէտք է աւելցնել գաղթականութիւններէն ընտրեալ տան երեսփոխաններն, որք միշտ հանրապետական են։ Ասով Հանրապետականք կը լինին 234։ Նաեւ, 177 համեմատականներէն Հանրապետականք 135ը շահիլ կը յուսան, քանի որ հանրապետական զանազան կուսակցութիւնք միակ ընտրելոյ մը վրայ պիտի համաձայնին ամեն շրջանակաց մէջ։ Հանրապետականաց թիւն այսպէս 370 ի կը մօտենայ։

Ընտրեալ 224 հանրապետական երեսփոխանաց 167 ը չափաւորք են և 57 ն արմատականք։ Այս համեմատութիւն գոհացուցիչ է անշուշտ, բայց յայտնի չէ թէ համեմատական ընտրութեամբ ի գործ կը դնէին երենց ընտրութեան իրաւունքը։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

ՓԷՐԷՊՊՈՒԷ, 24 սեպտ.—Արտաքին գործոց նախարար Պ. Կիրս ասա վերադարձաւ ի Ֆինլանտիա ուղեւորութենէն, և կ'ըսուի թէ Պերլին պիտի երթայ՝ երկուց Կայսերաց տեսակցութեան առթիւ։

—Պեռլին, 24.—Նաթալի թագուհին գրով ծանոյց առ Միլան թագաւոր թէ ինք բայարձակ որոշած է Պելկրատ մնալել տեղւոյն 29ին (առաջիկայ կիրակի)։ Պաշտօնական ակմտոց մէջ ապահովապէս կը ծանուցուի թէ Միլան թագաւոր եւս պիտի վերադառնայ, և կը վախցուի թէ պիտի ուզէ օգուտ քաղել Սահմանադրութեան 72ԴՐ յօդուածէն, որ իրեն իրաւունք կուտայ ստանձնելու Ալեքսանդր թագաւորին խնամակալութիւնը։ Բայց գլխաւոր խնամակալ Ռիսթիչ կը յուսայ խառնաշփոթութեան առաջքն առնուլ։

—Վիեննա, 24.—Նայէ Թրայէ Փրէսէ այսօր երիցն յօդուած մը կը հրատարակէ Նաթալի թագուհւոյն վրայ, եւ կ'ըսէ թէ կեղծ դիւրագրածութիւն է ՀՏԿԷՆ Նաթալի նկատել սիրալիր մայր մը որ կը փութայ իւր որդին ողջագուրել։ Նա Պելկրատ կ'երթայ որոշ գաղտարով մը, և անշուշտ իրրեւ թշնամի Աւստրիոյ։

—Մոսքվէի Վէդոմոսթի լրագրին Սոֆիայի թղթակիցը կը գրէ թէ սա դէպք գաղտարար կուսակցութեան մէջ ընդդիմադիր կուսակցութեան կրած վճռակին վրայ։—Այս կուսակցութեան թերթը, Նարոդնի Փրաֆ, հարկադրեցաւ իւր հրատարակութիւնը դադրեցնել, որովհետեւ իւր Ֆինանսիստ խմբագիրն եւս բանտարկուած է, և պուլկար հրապարակագիրներէն օ՛չ ոք յանձն կ'առնու պատասխանատու զոնը լինել։ Ընդդիմադիր թերթին այս ինն գլխաւոր խմբագիրք ամենը մէկէն չորս տարուոյ բանտարկութեան դատապարտուած են, որ կ'ընեն մարդ դլուխ միջին հաշուով հինգ ու կէս տարուոյ բանտարկութիւն՝ սակ «լրագրական յանցանքի» համար։

—Վերջին ժամանակներս Անգլիա մեծաւ հոդածութեամբ աւելցուց եւ զօրացուց Մալթա կղզւոյն արդէն առաւել ամրութիւններն, և մանրեղ ժողովրդեան գործաւոր և գիւղացի դասերէն կազմեց կիրթ և քաջավարժ զունդեր հետեւակաց և հրետանաւորաց։

—Ժորնալ դը Սէն Փէթերսպուրկ կառավարական թերթն իւր սեպտ. 22 թերթով կը հաստատէ թէ 1888 տարւոյն մէջ Ռուսիոյ ելմտացոյցը կը ցուցնէ երեսուն միլիոն ռուբլի հաստիքի առաւելութիւն ծախուց վրայ։

—Զանզիպարի Սուլթանն կողմէ եւս գեսպանութիւն մը Փարիզ հասաւ՝ Արուեստահանդիսին առթիւ։

—Պուլկար կառավարութիւնը պիտի առաջարկէ Սոպրանյէին որ ցկենսաթոշակ մը կապուի հանդուցեալ ազգային գործիչ Զախարիա Սթոյանովի այրւոյն։ Ֆերտինանտ Իշխան ալ հրամայեց որ հանդուցելոյն երկու զաւակներն իւր ծախիւք դաստիարակուին։ Անհիմն է ուրեմն Սթոյանովի թշնամեաց յայտարարութիւնը թէ ահագին հարստութիւն կը թողու։

—Պ. Ռիսթիչ՝ Սերպիոյ դիւանագիտ խնամակալն թերթն՝ Օգէ՝ Սթոյանովի վրայ յօդուած մը գրելով, կ'ըսէ թէ օ՛չ Սերպիա օ՛չ Ռումանիա այլ ևս չպիտի գործեն նոյն սխալը զոր ժամանակէ մ'ի վեր Պուլկարիա կը գործէ՝ հակառուս ուղղութիւն մը տալով իւր ներքին և արտաքին քաղաքականութեան։

—Զարը «Կայսերական Բարձրագոյն Տուն» նախանձելի տիտղոս տուաւ Զեռնակորայի իշխանին Միլիձա դստեր, որ Լէյշտենպուրկի դքսուհի է այժմ։

—Զարն ամեն ծախք իւր անձնական դանձէն վճարելով, արմտիօք լեցուն շրջենաւ մը ղրկեց Անթիվարի, յօդնութիւն չեռնակորացի սովելոց։

—Փեթերսպուրկի պաւական Բարեսիրական ընկերութիւնն իւր 200 օսմ. ոսկւոյ պարգեւ խոստացաւ Մակեդոնիոյ ցնորզրութեան և յարակից խնդրոց վրայ լաւագոյն երկն յօրինող հեղինակին։

—Անգլիոյ և Իտալիոյ միջեւ պայմանագրութիւն մը ստորագրեցաւ դերեվճառութեան խափանման համար։ Գերեվարաց տարեւան այս պայմանագրութեամբ կը նկատուի ծախսհինութեան հաւասար ոճիր, և գերի պարունակողնաւերն անմիջապէս դրաւուելով, դատի պիտի ենթարկուին յատկապէս կազմեալ դատարանաց առջեւ։ Անգլիա որոշեց Սիերա-Լէոնէի, Սուաքինի, Ասէնի և Զանզիպարի նաւահանգիստներն, ուր պիտի դիմեն անգլիական մարտանաւերն իրենց բռնած գերեվարաց նաւերը դատի ենթարկելու համար։ Իտալիա դեռ չէ որոշած իւր նաւահանգիստներն։ Անգլիական և իտալական կառավարութիւնք իրարու փոխադարձ իրաւունք կուտան այցելու անգլիական և իտալական գրօշ կրող նաւերն, որոց համար կանգած լինի թէ գերի կը պարունակեն։

—Մեծաւ յաջողութեամբ գործի կը ձեռնարկէ Պարսկաստանի Կայսերական Դրամատունն, որ անգլիական հատատութիւն մ'է, և սեղմանաւորական գործողութիւններէ զատ նաեւ հանքեր շահագործելու իրաւունք ունի, ինչպէս գրած ենք արդէն։ Առ այժմ դրամագլուխը մէկ միլիոն ոսկի է, բայց չորս միլիոնի կրնայ բարձրացուիլ։

—Աւստրիոյ Կայսրն Հունգարիայէն մեկնեցաւ, մեծաւ զօրաց ընտիր առաջնորդներու հետ՝ իւր ջերմ գոհունակութիւնն յայտնելով։ Մաճառք եւս գոհ ցնծացին իրենց թագաւորին ցոյց տուած հոդածութենէն։ Բայց գժբախտ դէպք մը տեղի ունեցաւ, որ տակաւին մութի մէջ է։ Մոնոռ մաճառական փոքր քաղաքին մօտ գնդապետի մը տան վերեւ պարզուած աւստրեան դրօշը բզկի բզկի եղած և ցեխի մէջ թաթախուած գտնուեցաւ։ Այս չարութեան հեղինակն ու շարժառիթն յայտնի չեն տակաւին։ Կայսրն խմենալուն պէս, այն քաղաքը գնաց, ուր տեղական իշխանութիւնք ընդ առաջ ելնելով, իրենց անձնուիրութեան եւ հաւատարմութեան ջերմագին հաւատիքն ընծայեցին։ Կայսրը պատասխանեց. «Կը յուսամ որ ձեր հաւա«տարմութիւնն օ՛չ միայն խօսքով այլ «և գործքով ցոյց պիտի տաք, և հոս «տեղի ունեցած չարագործութեան «նման պիտի եղելութիւնք չպիտի «կրկնուին, և հեղինակները գտնուե«լով պիտի պատժուին ըստ օրինաց և «իրաւանց»։ Այս խիստ բայց արդար խօսքերն արտասանելով, Կայսրն հեռացաւ անմիջապէս։ Աւելորդ է ներկայից որոտալութեան վրայ խօսիլ։

—Զարն հրաման ղրկեց իւր Պելկրատի դեսպան Պ. Փերբանիի՝ պաշտօնապէս ներկայ դանուիլ Նաթալի թագուհւոյն ի Պելկրատ ընդունելութեան։

—Լոնտոնի երեւելի յոյն սեղանաւոր Պ. Ի. Ա. Համպրօ Անգլիոյ Դրամատան Ցնծալին Խորհրդոյն անդամ ընտրեցաւ։

—Անցեալ օր ծանուցեր էինք թէ առաջիկայ պատերազմին ի Նախատեսութիւն՝ իտալական զօրքը չորս բանակներու բաժնուած է։ կը ծանուցուի թէ հինգերորդ բանակ մ'եւս պիտի կազմուի յատկապէս աւստրեան բանակին հետ դաշնակցաբար գործելու համար, և ասով կը բացատրուի եղեր Փիսանէ իտալացի զօրավարին Աւստրիա և ի Թուրքիա ուղեւորութիւնը։

—Անգլիական Ռոյնոէր արքունի շրջենաւը Զանզիպարի Բէմպա կղզւոյն մօտ արաբական նաւ մը բռնեց, յորում 131 գերիներ կային։ Ասոնք անմիջապէս ազատ հռչակեցան։

—Վիեննայի լրագրաց մէջ հրատարակեալ հեռագիրը Ֆրանսական ընտրութեանց վրայ նորագոյն տեղեկութիւնները կը հաղորդեն։

Հանրապետականք 350 երես ոչխան անպատճառ պիտի ունենան, և թերեւս աւելի ալ։ որովհետեւ արդէն առաջին քուէարկութեամբ ընտրեալ 224 Հանրապետականց վրայ պէտք է աւելցնել գաղթականութիւններէն ընտրեալ տան երեսփոխաններն, որք միշտ հանրապետական են։ Ասով Հանրապետականք կը լինին 234։ Նաեւ, 177 համեմատականներէն Հանրապետականք 135ը շահիլ կը յուսան, քանի որ հանրապետական զանազան կուսակցութիւնք միակ ընտրելոյ մը վրայ պիտի համաձայնին ամեն շրջանակաց մէջ։ Հանրապետականաց թիւն այսպէս 370 ի կը մօտենայ։

Ընտրեալ 224 հանրապետական երեսփոխանաց 167 ը չափաւորք են և 57 ն արմատականք։ Այս համեմատութիւն գոհացուցիչ է անշուշտ, բայց յայտնի չէ թէ համեմատական ընտ-

---

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՊԱՐԻԶԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԿԵՑՔԸ

(Շար. Եբեկ Բեռ.)

Ճառախօսներն թուում սկսում է խօսել և մի ծերուկ ակադեմիկոս, որը իր ճառի մէջ սկսում է անդուշարար զանազան քաղաքական անտեղի ակնարկութիւններ անել, գովելով Ֆրանսիայի ներկայ կառավարութիւնը և անընդհատ յարձակուելով Ֆրանսիայի նախկին կառավարութիւններն դէմ։ Եւ ահա հասարակութեան մէջ սկսում են լսվել բողոքներ։ «Pas de politique» (հարկաւոր չէ քաղաքականութիւնը) սկսում են աղաղակել սեղանի զանազան ծայրերից։ Բայց ծերուկ ակադեմիկոսը չէ խրատվում և անվրդով շարունակում է իր ճառը։ Ցանկարծ սեղանի մի ծայրից վեր է թռչում մի երիտասարդ հիւր և, ընդմիջելով ճառախօսին, բարձր ձայնով աղաղակում է։ «Եթէ այդպէս է, եթէ դուք քաղաքականութեան վրա էք խօսում, ուրեմն ես էլ իրաւունք կունենամ իմ քաղաքական համոզմունքս յայտնելու։ vive Boulanger»։

Այդ ժամանակ սեղանի միւս ծայրից արագ քայլերով մօտենում է Բուլանժէի երկրպագուին մի այլ երիտասարդ եւ գըցում է նրա առջեւ իր այցետումը։ Այդ նշանակում է թէ վաղը լինելու է դուէլ։ Այդ էլ բաւական չէ։ մի երրորդը իր այցետումը դցում է մի չորրորդին,—ուրեմն մի երրորդ դուէլ։

Երեւակայեցէք ձեզ հրաւիրվածների խառնաշփոթութիւնը։ Անմիջապէս հեռանում է դահլիճում անկարգութիւն չփոթութիւն, իրարանցում։ Բոլոր հիւրերը իրանց տեղերից վեր են թռչում, կանչք քիչ է մնում ուշաթափվեն։ Ժիւլ Սիմոն կանչել է տալիս մարանչողներին, համոզում է նրանց հաշտվել և իրար ձեռք սեղմել, միայն թէ գրական միջազգային կոնգրէսը չը վերջանայ մեծամարտութիւններով։

Այդ ժամանակ մտնում է ինձ գեղեցիկ և արտայայտիչ դէմքով մի երիտասարդ, տալիս է իր անունը, յայտնելով որ ինքն իրաւական և իրաւաբանական յայտնի ամագրի խմբագիր է և դիմում է ինձ հետեւեալ խօսքերով։

—Կոնգրէսի այսօրվայ փակման նիստին ես ուրախութեամբ լսեցի ձեր ճառախօսութիւնը, որից իմացայ թէ դուք արեւելցի էք, հայ էք։ Դ

բութեանց մէջ Արմատականք միթէ աւելի չ'պիտի զօրանան ի վնաս չափաւոր տարրին։

Ընտրեալ 159 հակառաւարական երեսփոխանաց 86ն Արքայականք են, 51 ը Պոնապարթեանք և 22 ը Պուլանժէականք։

Զգաւոր հանրապետական կուսակցութեան պետերն ընտրուած են կամ պիտի ընտրուին ամենքն ալ, բաց ի Պ. Ժիւլ Ֆէրրիէ։ Մերակոյտի անդամ և երեւելի մտաւորական Պ. Լէոն Սէ, որ քաղաքական գործոց մէջ առաւել ուղղակի դեր մ'ունենալու համար երեսփոխանութեան հետամուտ էր, ընտրեցաւ ի Փօ։ Բանաստեղծ և պուլանժէական երեւելի գործիչ Պ. Փօլ Ֆէրուլէտ ընտրեցաւ յԱնկուլէմ, և պուլանժէական Փիքօ հրամասար սպայն Պ. Ժիւլ Ֆէրրիի վրայ յաղթութիւն տարաւ Նորա բնագաւառին մէջ իսկ, ի Վոսժ։ Պ. Կոպլէի վրայ յԱմիէն յաղթութիւն տանողն եւս պուլանժէական մ'էր, Պ. Միլվուա։ Պուլանժէականաց մեծագոյն մասը Փարիզի մէջ իսկ ընտրուած է կամ պիտի ընտրուի, և մէկ փոքր մասը՝ գաւառներէն։ Պուլանժէական Պ. Նաքէ և Պ. Հանրի Ռոչֆոռ համեմատական մէջ են, և Ինթրանսիժանի խմբագրապետն (Ռոչֆոռ) ընտրելու հաւանականութիւն չունի։

Ի Փարիզ, Զօր. Պուլանժէ 7,846 քուէ ստացած է ընդդէմ 5,507 քուէից, զոր ստացաւ գործաւորական-ընկերվարական ընտրելի Պ. Ժոֆրէն, դեր-նախագահ Փարիզի քաղաքային խորհրդոյն, և 444 քուէից որ տրուեցան առ Պ. Ժօրժ Թիէպօ։ Այս վերջինս էր հիմնադիրն Պուլանժէութեան, բայց տեսնելով թէ Զօր. Պուլանժէ Հանրապետութեան բարոյական աշխատելէ դադրած է և միայն իւր անձնական փառասիրութեան հետամուտ կը դտնուի, և չի խղճար Հանրապետութեան յոռեգոյն թշնամեաց հետ դաշնակցիլ, այս բաները տեսնելով, Պ. Թիէպօ հրապարակաւ բաժնուեցաւ Պուլանժէականներէն, և յայտարարելով թէ ինք ամեն բանէ յառաջ հանրապետական է և յետոյ վերաքննական, նոյն ինքն Պուլանժէի դէմ ընտրելի հանդիսացաւ։

Հակառակ իւր ստացած 7,846 քուէից, որոց մի մասն ապօրէն կը համարուի, Զօր. Պուլանժէ դեռ ընտրեալ չի համարուիր։

Արմատական Պ. Ֆլորքէի և Պ. Ֆլէմմնսյի դէմ (որք համեմատական մեծագոյն) անոնցմէ Պուլանժէականներ ընտրելի հանդիսացած և անոնց վրայ մասնակի յաջողութիւն մ'ունեցած են ցայս վայր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական ժողովոյ որոշմամբ, Արժ. Տ. Սուքիաս ուսագ քահանայ Նիկոմիդիոյ Գալաթիոյ գիւղը գնացած էր բռնի ամուսնութեան ծանօթ դէպքը քննելու և արդիւնքը տեղեկագրելու համար։

Ն. Արժանապատուութիւն նախընթաց իրիկուն մայրաքաղաքս վերադարձած ըլլալով, երէկ իւր տեղեկագիրը մնացեալ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

Կատարուած քննութեամբ հաստատուած է թէ այդ ամուսնութիւն բռնութեամբ կատարուած է այն պարագայներու մէջ զորս ժամանակին հաղորդած ենք։ Տեղւոյն եկեղեցւոյ արձանագրութեան տումարին դիմելով տեսնուած է թէ աղջիկը ծնած է 1878 մարտ 22ին, որով տասն և մէկ տարեկան է այժմ։

Տ. Սուքիաս Հօր տուած տեղեկագիրը նկատողութեան պիտի առնուի կրօնական ժողովոյ յառաջիկայ նստին մէջ։

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՆԻՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Յառաջիկայ կիրակի առաւօտ Վերացման Խաչի տօնին առթիւ, եգիպտոսի Առաջնորդ Դեր-Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան հրաւիրեալ է Ս. Պատարագ մատուցանել յառաւօտուն, և երեկոյին Ս. Խաչի Վերացման արարողութիւնը կատարել ի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ Դարակէօմրիկի։

Խնամակալութիւնս հրաւէր կը կարդայ բարեպաշտ ժողովրդականներ-կայ գտնուիլ սոյն եկեղեցական հանդիսին։

ՀԱՆԴՈՒՅՑԱԼ ՄԵԼԻՔԵԱՆ ՈՍԿԵՐԻՉ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՂԱՅԻ ԱՄՈՒՍԻՆ

ՏԻԿԻՆ ԳԱՅԻԱՆԷ

Յետ երկարատեւ հիւանդութեան երէկ գիշեր իւր մահկանացուն կնքեց ի խոր սուգ թողլով իւր զաւակունքն։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը, Շաբաթ, Սեպտեմբեր 18, ժամ 4 ½ին, Գումգապուի Պատրիարքական Մայր-Եկեղեցւոյն մէջ, ուր կը դտնուի այժմ հանգուցեալին մարմինը եւ անտի պիտի փոխադրուի ի Պալեքլը Գոշ-Մէլիքեան դերդաստանին յատուկ դամբարանին մէջ ամփոփուելու։

Կը հրաւիրուին բոլոր ազգականք եւ բարեկամք ներկայ գտնուիլ սոյն տխուր հանդիսին։

15 Սեպտեմբեր 1889, Կ. Պոլիս

ՄԱՍԻՍ

ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐ

Մասին սեպտ. 15 թիւը կը հրատարակուի վաղն, հետեւեալ պարունակութեամբ։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ. Ազգային տեսութիւն.
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ. Ո-գնդ-տրութիւն Ֆրանսիոյ մէջ։
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ. Արտաքին Կանոնական քրիստոնէութիւն.
ԹԵՒԱՆԻՈ. Նորագիւտ Լոռդի (Բանաստեղծութիւն).
* * * Պատկերը.
ԳԵՂԱՄ Լուսնակ գիշերով ոսկեղծութիւն մը, (Մուղ)

Մասին ձեռքէ կը ծախուի 40 փարայ։
Տարեկան բաժանորդագին է։

Պոլսոյ	համար մէկ մէճիտիէ
Գաւառաց	» » քառորդ ոսկի
Օտար երկրաց	» վեց Ֆրանք

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վեր. Կիսաուղիղոսի մամուլը հրամանաւ տը. պագրեալ Սահակեանցի «Սրբազան պատմութեան» Ա. հատորն, այս անգամ Պոլսոյ աշխարհիկ բարբառի վերածուելով հրատարակուած է։

Դիմել կեդրոնատեղին ի Վաղաթիա Բիւզանդեան Գրատուն Սեղբոս խան թիւ 5, և ի Պոլիս, Նշան Պէրպէրեանի տպարանը։

823 Գին 4 դահեկան 1—5

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէրութ Նահանգին մէջ թուպալի անուանուեցաւ Թէմալ պէյ, նախկին մէջլիսի Արշիպեղագոսի կղզեաց Նահանգին։

Թէհրանի օսմանեան դեսպանատան խորհրդական անուանուեցաւ Իրթան պէյ, նախորդ առաջին քարտուղար օսմանեան դեսպանատան Լոնտոնի։

Պաղտատ Նահանգին մէջլիսուպեի անուանուեցաւ Մահմուտ Թալաթ պէյ, հրաժարեալ մէջլիսուպեի Պասրայի Նահանգին։

Թիֆլիսի օսմանեան հիւպատոսարանին քանչելեր և միանգամայն փոխ-հիւպատոս անուանուեցաւ Մէհմէտ Բիֆաթ էֆէնտի, օսմանեան փոխ-հիւպատոս Փոթիի։

Փոթիի օսմանեան փոխ-հիւպատոս անուանուեցաւ Ալի Նուրի էֆէնտի, քանչելեր և փոխ-հիւպատոս Թիֆլիսի։

Բէրմանշահի օսմանեան հիւպատոս անուանուեցաւ տեղւոյն փոխ-հիւպատոս Բուսուլ էֆէնտի։

ԿՐԵՏԷ

Կրետէ առ Սբ. Նշանաւոր ուղղակի թղթակցութիւն մը, սեպտ. 16 և 17 թիւերով, կը հաստատէ Նաբիր փաշայի յաջողութիւնն, և կրետացոց ապրստամբութեան խափանումն։ Հրոսակաց մնացորդն ապաստանած է ամմատելի Սպիտակ Լերանց խորտուբորտ կիրճերուն մէջ, ուր զիրենք կարելի չէ զարնել։ բայց ամեն կողմէ պաշարուած, չեն կրնար պաշար ընդունիլ, և քանի որ ձմեռը կը մօտենայ, պարտին անձնատուր լինել ի վերջոյ։ Նաբիր փաշա իւր սպայակոյտին և ֆրանսական հիւպատոսին հետ, ծովու ճամբով դնաց մինչև Սէլինօ, և անտի ցամաքի ճամբով մնաց ի Ֆիսամօ, ապստամբութեան կեդրոնն, և թէպէտ խիստ քիչ զօրք ունէր, բայց ամենուրեք հնազանդութեան նշաններ միայն տեսաւ։ Ֆալիպէս, Արմենոս և Վամես անուն մահմետական գիւղերն հիմնովին կործանած են քրիստոնեայ ապստամբք։ Պաշարման խստութեան պատճառաւ, ապստամբապետերէն մին, Բաֆիթան Կուլանիս, անձնատուր եղաւ, և Հանեա տարուեցաւ դատուելու։ Ցայտարարութիւններ հրատարակելով, Նաբիր փաշա ծանոյց Ժողովրդեան թէ առաջի օրինաց ո'րպիսի մեծ վտանգաց կ'ենթարկին նոքա որք կը հիրրնկալեն ապստամբները կամ կ'օգնեն անոնց ո'և է կերպիւ։

ՀԻՒՍԷՅԻՆ ՀԻՒՍՆԻ ՓԱՇԱ

Բեգբսպուրկի օսմանեան դեսպան Հիւսէյին Հիւսնի փաշայի ուղեւորութիւնն յետաձգուած է յառաջիկայ շաբթուան։

ՍԱՅԻՏ ՓԱՇԱ

Վեր. Սուլթանը Ֆերիդութեան ատիճան և միանգամայն պատուակալ թիկնապահի տիտղոսը շնորհած է, Թնդանօթարանի զինուորական մասյուն տանին նախագահ Մերլիվա Սայիտ փաշայի։

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԸ

Յառաջիկայ չորեքշաբթի օր, Պարսից Նասրէտտին Շահի ծննդեան տարեդարձն ըլլալով, պարսկական դեսպանատան ամբասոցին մէջ, ի Սթեթնիա, հացկերոյթ մը պիտի տրուի։ Այս առթիւ հարկ եղած հրաւէրներն արդէն ղրկուած են։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Մոնթէպելլը Կոմսը, կը մեկնի մայրաքաղաքէս, հաւանօրէն երկուշաբթի, իւր կնոջ հետ Փարիզ երթալու համար, ուր ժամանակ մը պիտի մնայ Մոնթէպելլը Կոմսուհին։ Դեսպանն ինք քիչ օրէն պիտի վերադառնայ Կ. Պոլիս։

ԹԷՀՐԱՆԻ ԼԻԺԻՆ

Ծխախտի Բէժիի Ընկերութեան բաժնետէրաց տարեկան և արտասովոր երկու ժողովներն ի մտոյ պիտի դումարին մայրաքաղաքիս մէջ։ Ընկերութեան վարչութիւնը կը զրաղի այն երկուց ժողովոց դումարման պատրաստութեամբ։

Արտասովոր ժողովն իւր վճիռը պիտի տայ Օսմ. Կառավարութեան և և Հանրային Պարտուց վարչութեան հետ մնքեալ կարգադրութեան վրայ, որով ընկերային գրամագլխոյ 20 առ 100ը կը զեղչուի, ինչպէս և ուրիշ տնօրինութեանց վրայ, որք իւր հաւանութեան պիտի մատուցուին, ընկերութեան ձեռնարկութիւնը բարւոքելու նպատակաւ։

Սովորական ժողովն ալ ի նկատ պիտի առնու 1888 մարտ 1/13էն մինչև 1889 մարտ 1/13 ընկերական տարւոյն հաշուեկշիռը։ Կը կարծուի թէ, կ'ըսէ Լ. Հէրշար, գրամագլխոյ զեղչումն ձեռք բերուած գումարը բաւական լինելով նախընթաց տարեշրջանները վնասները դոցելու, ընթացիկ տարւոյս շահերը տրամադրելի պիտի մնան, և ուր առ 100 շահաբաժին մը պիտի բաշխուի բաժնետերաց։ Բայց այս շահաբաժնի դուրս ծածումը պիտի ենթարկուի վարչական խորհրդոյն տնօրինութեան։ զի երկու տնօրինութիւնք կը խորհուին, կամ այս շահով պահեստի գումար մը կազմել, և կամ թուանդաշ շահը բաժնել, որպէս զի Օսմ Կառավարութիւնն այժմէն իսկ կարենայ մասնակցիլ Շահակցական Բէժիի Ընկերութեան շահերուն։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարար Վահան Զէնիի փաշա երէկ Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Աւստրիական դեսպան Պառոն Բալիցէ, որ իւր կառավարութիւնէն տասը հինգ օրուան արձակուրդ ստացած է, երէկ իրիկուն Վիէննա ուղեւորեցաւ Եւրոպական կառախումբով։

Արտաքին գործոց նախարարութեան թարգման Միքայէլ էֆէնտի Սիրքէճիի կայսրանն երթալով, յանուն Վսեմ. Սայիտ փաշայի, ողջերթ մաղթեց աւստրիական դեսպանին։

ՍԸՐ Հ. ՏՐԲՄՄԸՆՏ ՈՒՈԼՖ

Սըր Հէնրի Տրբմմընտ Ուոլֆ, Թէհրանի անգլիական դեսպանն, որուն համար բսուեցաւ թէ չուզեր իւր պաշտօնատեղին վերադառնալ և թէ Կ. Պոլիս պիտի գայ դեսպանի պաշտօնով, վերջապէս Պարսկաստան կը վերադառնայ, այսօր կամ վաղը Կ. Պոլսէ անցնելով։ Իսկոյն դեսպանական շքեղնաւն իւր տրամադրութեան ներքև դրուած է, զինք մինչև Պաթում տանելու համար։

ՀՆՈՒԹԻՒՆՔ

Սիրքէճիի մաքսատան պաշտօնեայք Փարիզ դնացող ուղեւորի մը պարսաւանները քննելով զանազան հնութիւններ գտած էին և այդ ուղեւորն էր ի Դարասի Սուլթան Զայրը անուն տեղը դտնուած ոսկեբորակի հանքին տնօրէնն Պ. Պրանդքիմ։ Այդ հնութիւնք, որք, կրսէ Թուրքէ, 45-50,000 ոսկւոյ արժողութիւն ունին, դտնուած են Պանտրմայի շրջակայքէն, Այտրնճքէն, Էրմէնի քէշլէն, Սուլթան Զայրէն և այլ տեղիք առանց հրամանի խուզարկութիւններ կատարելով։ Դտնուած հնութիւնք, որոց մէկ մասն ի Պոլիս վաճառուած է, այժմ մեստուկներու մէջ դեռեւուած են և կը դտնուին Մաքսային վերատեսչութեան պաշտօնատունը։ Այս առթիւ նոյն վերատեսչութեան և Կրթական Նախարարութեան միջև բանակցութիւնք կը կատարուին։

ԽՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Կայս. հրամանաւ հաստատուի խուլերու և համբերու վարժարանին համար յատուկ սրահ մը որոշուած է առեւտրական Հաւիսիկէ վարժարանի շէնքին մէջ։

Վարժարանի բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի։

—Վարչական կուսակալութեան խորհրդական Պ. Սէլքսանդր Բորնիլով Օտեսայէն երէկ մայրաքաղաքս ժամանեց։

—Ֆրանսացի ծանօթ գրագէտ Լէոն տը Թէնօ կոմսն, որ մէկ քանի օրէ ի վեր մայրաքաղաքս կը դտնուէր, երէկ իրիկուն Փարիզ ուղեւորեցաւ եւրոպական կառախումբով։

—Նախընթաց գիշեր առաւօտեան դէմ սպանուած մարդ մը դտնուեցաւ ի Ղալաթիա Քէօմիւրքի փողոցը դտնուած երկաթագործի խանութին առջեւն։ Սպանուած մարդն, որ կոկորդին վրայ վերք մը ունէր, զմիւռնացի Տիմիթրի անուն ածխավաճառ մ'էր։

—Կայս. հրամանաւ 732 դրուշի ամսաթոշակ մը յատկացուած է կայս. թիկնապահ վախճանեալ գնդապետ Անէմյա Ֆաիզ պէյի ընտանեաց։

—Սարբերարի ոճրագործութեան հեղինակներու դատն ի մտոյ պիտի տեսնուի Եղեռնագատ ատենին առթիւ։

—Պերլինի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար Մուսթաֆա Բէֆիգ պէյ, որ արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ իրիկուն իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ եւրոպական կառախումբով։

—Պաթումի օսմանեան հիւպատոս Սէտատ պէյ երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Բ. զօրաբանակի թնդանօթաձիգ զօրաց մերիվա Մուսթաֆա փաշա երէկ մայրաքաղաքս ժամանեց օգտիոխութեան համար։

—Երէկ ի Պոլիս, Հաճի Թորոս անուն մարդ մը, որ բաւական գինով էր, Բրիկատ Բազարէն կանցնէր ձմերուկ ուտելով եւ դիւրաշարժ երթալով։ Հաճի Թորոս, օղիի ազդեցութեամբ ձմերուկի կեղեւներն մը դամբաճառի մը երեսին նետեց։ Մրգավաճառն, որ նոյն միջոցին զրաղած էր, յանկարծակի գալով Թորոսին վրայ յարձակեցաւ և այսպէս սկսաւ կռիւ մը։ սակայն տիկնաք վրայ հասնելով երկուքն ալ ձերբակալեցին։

—Զորեքշաբթի իրիկուն ի Պոլիս Քեարթիպ Միւսլիչէտտին թաղին մէջ Ապտուլլահ անուն քսան եօթ տարեկան երիտասարդ մը, որ նոյն թաղը երբեմն գիշերապահութիւն ըրած էր, իւր բնակած սընտարանի մէջ յանկարծամահ եղաւ։

—Բէյճիի վարչութեան ճարտարապետ Պ. Վալորի երէկ առաւօտ Փարիզ ուղեւորեցաւ արձակուրդով։

—Անգլիական Քէսթրէլ շոգենաւն, որ անցեալ օր մայրաքաղաքս գալով Թարապիոյ առջեւ երկաթ նետած էր, կալաց ուղեւորեցաւ, ուր պիտի սպասէ մինչեւ որ աւարտին Դանուբի միջազգային յանձնաժողովոյ խորհրդակցութիւնք։

—Երէկ գիշեր ի Պօյանը գիւղ մարդ մը, որ գիշերնոց հագած էր, ինքզինքը ծովը նետեց։ Անմիջական օգնութիւնք ազատեցին զնա, որ կ'երեւի թէ մտային խանգարում մը ունեցած է։

—Զորեքշաբթի գիշեր ի Ղալաթիա, Մուսթաֆա անուն նաւավար մը ու իւր ընկերք Իզզէթ անուն նաւաստի մը վերայ յարձակեցան և դաշոյնով վիրաւորեցին։ Ոստիկանութիւնն խմանալով վիրաւորեալն հիւանդանոց փոխադրեց։ Վիրաւորողք փախան։

—Երէկ Գարաքէօյի նաւամատոյցն մէկ քանի նաւավարներ յանախորդ մը առնելու պատճառաւ կռուի բռնուեցան։ Նաւավարներէ մին փայտով ուրիշ նաւավարի մը գլխուն զարնելով վիրաւորեց։

—Միրիվթէէ կը գրեն թէ անցեալ օր նոյն գաւառակի չրջակայ Ապտիսիա անուն գիւղին մէջ հրդեհ ծագելով 120 տուներ այրեր են։

—Նիկոմիդիոյ նախորդ կառավարիչ Սիրէթ էֆէնտի, որ ժամանակ մ'ի վեր հիւանդ էր, մեռեր է ի Պրուսա։

ՀԱՄԱՌՕՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի պետս Ազգ. Նախակրթական Վարչութեան։

Վաւերացեալ

յԻսլամ. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչ.

Գրեց ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ազգ. առաջնակարգ ուսուցիչներէն Մարգարեան Գրիգոր էֆէնտիի աշխատասիրած սոյն գասագիրքն՝ իւր դիւրաւոյց մեթոդով, պարզ և ամփոփ պարունակութեամբն գործ մ'է։

Ազնիւ Թուղթի վրայ և Պատատեան ազնիւ ու ճաշակաւոր տպագրութեամբ։

Գին 100 փարայ

Կեդրոնատեղին է Զարդարեան Գրատուն, Պոլիս Սուլ. Համամ՝ նը գտնուի նաև բոլոր գրավաճառաց քով։ 823 1—5

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ՀԱՎԱՍԻ ԴՈՐԵՆԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

ՍՊԱՆԻՈ ԵՒ ՄԱՐՈՔ

Թանգէր, 25 սեպտ.

Գոհացուցիչ կարգադրութիւն մը կնքեցաւ ընդ.մէջ Սպանիոյ և Մարոքի, վերջին դէպքին վրայ։ Մարոքի վճռակտիր տուաւ պահանջուած բոլոր գոհացումները։

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱ

Լոնտոն, 26 սեպտ.

Անգլիոյ Պանքային չաթթական հաշուեկշիռը՝ նախորդ չաթթուան հաշուեկշռոյն հետ բաղդատմամբ՝ հետեւեալ տարբերութիւնները ցոյց կուտայ։

Պատրաստ մետաղադրամ—

Նուազում—անգլ. ոսկի	172,000
Պանքնոթք ի պահեստի—յաւելում—անգլ. ոսկի	214,000
Փոխանակագիրք և այլ թղթեր—նուազում—անգլ. ոսկի	177,000

Պահեստի գրամոց հանձնառութիւնն յանձնառութեանց հետ— 42 ⅓ %

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 15 սեպտեմբեր

Օսմանեան Բանսօրիւտ

Երէկ երեկոյ գոց. (Մինչ. Ս. Ներսէ		18	5
Պօրսային գոցումէն վերջը	»	18	4 ½
Բերսայի մէջ	»	—	—
Առաւօտուն բացուեցաւ	»	18	18
Այս օրին	»	18	16

ԻՍԹԱՆԲՈՒԼԻ ՓՈՍԻԼԻ

Երէկ երեկոյ		46	5
Այս առաւօտ		46	6
Այս օր		—	—

ԸՆԹԱՑՔ ԱՐՔԱԼԹՈՅՑ

Փոխառութիւն	Ա. Ներսէ	29	10
»	Բ. »	17	20
»	Գ. »	18	4 ½

ԲԱՅԹՆԵՐՈՒՄԻՆ

Ոսկիներ ֆէնէրալ	Անգլ. Լ.	4	16
Քրէտի ֆէնէրալ	Օսմ. »	8	20
Գանձ տը Գանս	» »	7	7
Սօս. Շանտ է վալէօր	» »	4	30
Թրամանէյ	» »	467 ½	
Բուսէլի երկաթուղի	Ֆր.	71	25
Ծպրկասիոն տը Բրիօրիթէ	»	—	—
Բանկէթուղի Լավրիսի		108	8

ԵՒՐՈՊԱՅԻՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 26 Սեպտեմբեր ժամ 5 վայր 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտ		97	15/16
Օսմ. » Ներկ Ս. բացուեցաւ		16	5/8
» » » գոցուեցաւ		16	½
» » » Ա		20	¼
» » » Բ		17	¾
» » » Գ		16	½
Օթոման 1871		95	
Փոխառութիւն 1877		102	
Պանք Օթոման		11	¾
Ռուսական փոխառ. 1873		101	¾
Եգիպտական մնացեալ (Ինտիֆիէ		92	
» առանձ. (բրիվիլեժիէ		104	
Տաքա Սանիէ		83	½
Տօմանիայ փոխառ. (Ոչիլար		108	½
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25	50

Վիէննա, 26 Սեպտեմբեր, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ		119 85
Օսմանեան երկաթուղի		29 20
» Լէժիի բանկէթուղի		118

Բարիզ, 26 Սեպտեմբեր ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռենթէ		104 75
» » 3 %		86 40
Օսմանեան քոնսոլիտ Սերի Դ. բացուեցաւ		16 67 ½
» » » գոցուեցաւ		16 70
» » » Բ		— —
» » » Գ		16 70
Օսմանեան երկաթուղի		71 55
» Լեժիի բանկէթուղի		—
Գանք Օթոման		544 37 ½
Գրէտի Լիոնէ		690
» Ֆոնսիէ		1287 10
Գանգուռա մ'Էգիպտ		95
Սուէզեցի ջրանցք		2302 50
Իտալական Ռենթէ		93 05
Սպանիական (արտաքին)		75 ½
Եգիպտական միացեալ		464 37 ½
Բրիօրիթէ Թիւրք		456 25
Հելլենական 5 %		472 50
Զէք Լոնտրայի վրայ		25 27

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, 14 սեպտ.

Լբագրոյդ 1674 թուոյն մէջ կարդացուեցաւ թէ Նիկոմիդիոյ առաջնորդ Գերապատիւ Բոգակիմեան Սրբազան Կէյվէյոյ Մէջլիսը եկեղեցւոյ մը շինութեամբ կ'զբաղի և մինչև իսկ յաջողած է չրջակայ յոյն գիւղացիներէն 250 ոսկիի չափ գումար մը ժողվել ի նպաստ նորաշէն եկեղեցւոյն։

Թէպէտեւ այսպիսի գումարի մը հաւաքումը բարդագոյն անհնարին է, բայց կ'յուսացուի որ յոյներն ինքնաբերաբար օգնեն իրենց հայրենակցաց, որոյ հետեւեալ հայերն յունաց եկեղեցւոյն շինութեան ատեն ըստ կարելւոյն նըպաստած են։

Ուրախալի է տեսնել որ գիւղացիք Նորին Սրբազնութեան հայրական խրատներուն և հոգեշունչ քարոզներուն անսալով, կը վարեն յառաջ տանիլ շինութեան գործն և վճարել իրենց պարտքերն։ և կանայք իրենց լուսոյն տալէ զատ չեն վարանիր իւր գործաւոր աշխատիլ։ եւ մինչեւ իսկ կռնակով քար կրել հեռաւոր վայրերէ, յոյն կանայք այ կ'օգնեն իրենց հայրենակցաց մասնակցելով անոնց աշխատութեանցը։

Շնորհակալութեան արժանի են նաև ի մէջ այլոց Երեմիա և Աղարիկ աղջիկներու զոհողութիւնքն, որք թէ՛ նիւթապէս և թէ բարոյապէս միշտ կը նպաստեն եկեղեցւոյն շինութեան, վերջապէս այս եկեղեցին աւելի գիւղացոց աշխատութեամբն և զոհողութեամբը կը վերանայ քան թէ դրամով։

ԱՐԱՄ ՂԱԶԱՆՃԵԱՆ

Հեռեւեալը, պատճէն թղթոյ մը, որ ղրկուած է առ Վսեմ. Աբիկ էֆ. Ունճեան Զէնկիլէրէն, կը հրատարակեմք ըստ խնդրանաց նոյն գիւղացւոյ։

Վսեմաշուք Աբիկ էֆ. Ունճեան
Ի Կ. Պոլիս

Վսեմաշուք Տէր

